CDTFA
CALIFORNIA DEPARTMENT OF TAX AND FEE ADMINISTRATION

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ և ԻՐԱԶԵԿՄԱՆ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Ինչո՞ւ եք կապվել ինձ հետ:

Մենք նախատեսում ենք այցելել մեր նահանգի բիզնեսների մեծ մասը՝ թույլտվության և լիցենզիայի կանոնավոր ստուգումների համար՝ որպես մեր Համապատասխանության և իրազեկման նահանգային ծրագրի (SCOP) մաս: Մենք մտադիր ենք կատարել հետևյալ քայլերը.

- հաստատել, որ ունեք անհրաժեշտ նահանգային հարկային և տուրքի թույլտվություններ և լիցենզիաներ,
- համոզվել, որ դուք մուտք ունեք մեր տրամադրած բազմաթիվ ռեսուրսների,
- ստուգել, թե արդյոք Ձեր բիզնեսի վերաբերյալ մեր գրառումները թարմացված են և ճիշտ,
- Ձեզ թույլ տալ հանդիպել ներկայացուցչի հետ, որը կարող է տեղեկատվություն տրամադրել և պատասխանել Ձեր հարցերին, ինչպես նաև
- ապահովել, որ Դուք հասկանում եք Ձեր հաշվետվությունների պահանջները:

Այս ծրագիրը ձեռնարկատերերին կրթելու, հարկային համապատասխանությունը բարելավելու և մեր համապատասխանության համակարգի արդարությունն ապահովելու համանահանգային ջանքերի մի մասն է: Թույլտվությունը և լիցենզիայի ստուգումը չեն փոխարինում աուդիտները կամ այլ հարկային համապատասխանությունը կամ հարկադիր կատարման գործողությունները:

Ի՞նչ թույլտվություններ և լիցենզիաներ են ինձ անհրաժեշտ:

Եթե Դուք վաճառում եք կամ վարձակալության եք տալիս ապրանքներ, Դուք պետք է ունենաք Կալիֆորնիայի վաճառողի թույլտվություն: Համաձայն նահանգային օրենքի վաճառողի թույլտվությունը պետք է ցուցադրվի Ձեր բիզնեսում (Եկամուտների և հարկային օրենսգրքի [R&TC] բաժին):

Ձեզ կարող է անհրաժեշտ լինել նաև թույլտվություն կամ լիցենզիա մեր կողմից կառավարվող այլ հարկային և վճարային ծրագրերի համար: Օրինակ, համաձայն Կալիֆորնիայի օրենքի՝ ձեռնարկությունները, որոնք վաճառում են ծխախոտ կամ տաբակ, պետք է ունենան առանձին լիցենզիա այդ ապրանքների վաճառքի համար: Երբ մենք այցելենք Ձեր բիզնեսը, մենք Ձեզ տեղեկատվություն կտրամադրենք այն մասին, թե ինչպես գրանցվել ցանկացած թույլտվությունների և լիցենզիաների համար, որոնք Ձեզ կարող են անհրաժեշտ լինել:

Ինձանից պահանջվո՞ւմ է գրանցվել հարկային հաշվետվությունների համար:

Համաձայն Կալիֆորնիայի օրենքի՝ «որակավորված գնորդը» պետք է գրանցվի California Department of Tax and Fee Administration-ում (CDTFA) (Կալիֆորնիայի հարկերի և վճարների կառավարման բաժին) և տարեկան զեկուցի և վճարի օգտագործման հարկը անմիջապես մեզ, ինչպես պահանջվում է R&TC բաժին 6225-ով: Դուք պետք է զեկուցեք և վճարեք օգտագործման հարկը մեր առցանց ներկայացման համակարգի միջոցով: «Որակավորված գնորդը» ներառում է ցանկացած բիզնես, որը այլ կերպ պարտավոր չէ գրանցվել մեզ մոտ վաճառքի և օգտագործման հարկային նպատակներով, ով օրացուցային տարվա ընթացքում 10,000 ԱՄՆ դոլարից ավելի հարկային գնումներ է կատարում (բացառությամբ տրանսպորտային միջոցների, նավերի կամ օդանավերի), եթե այդ գնումների օգտագործման հարկը այլ կերպ չի վճարվել այս նահանգում բիզնեսով զբաղվող կամ հարկը գանձող լիազորված մանրածախ վաճառողին: «Որակավորված գնորդի» այս սահմանումը գործում է 2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս հրապարակում 126, Պարտադիր օգտագործման հարկային գրանցում սպասարկող ձեռնարկությունների համար,, կամ մեր կայքը՝ *www.cdtfa.ca.gov*:

Տե՛ս մեր առցանց ուղեցույցը՝ *Կալիֆորնիայի օգտագործման հարկը, լավ է Ձեզ համար: Լավ է Կալիֆոռնիայի համար՝* Կալիֆորնիայի օգտագործման հարկի մասին ավելին իմանալու համար:

Ի՞նչ տեղի կունենա թույլտվության և լիցենզիայի ստուգման այցի ընթացքում:

SCOP-ի ներկայացուցիչները կայցելեն Ձեր բիզնեսը, կներկայացնեն իրենց և ցույց կտան CDTFA-ի կողմից տրված նույնականացումը: Այնուհետև ներկայացուցիչները կորոշեն, թե արդյոք Դուք վաճառում կամ վարձով տալիս եք ապրանք, որը պահանջում է վաճառողի թույլտվություն:

Եթե Ձեզանից պահանջվում է ունենալ վաճառողի թույլտվություն, և այն ցուցադրված չէ, SCOP-ի ներկայացուցիչները կխնդրեն ցույց տալ այն: Նրանք նաև կխնդրեն ցույց տալ CDTFA-ի կողմից տրված ցանկացած լրացուցիչ թույլտվություն և լիցենզիա, որը Դուք կարող եք ունենալ, ինչպես նաև Ձեր տեղական բիզնեսի լիցենզիան:

SCOP-ի ներկայացուցիչները կստուգեն, թե արդյոք Ձեր բիզնեսի վերաբերյալ մեր գրառումները ճիշտ են: Նրանք կարող են նաև Ձեզանից ավելի շատ տեղեկություններ խնդրել Ձեր բիզնեսի գործունեության մասին՝ համոզվելու համար, որ Դուք հասկանում եք Ձեր հաշվետվությունների պահանջները: Ի վերջո, նրանք Ձեզ կհարցնեն, թե արդյոք հարցեր ունեք:

Եթե Ձեզ անհրաժեշտ է գրանցվել վաճառողի թույլտվության կամ լիցենզիայի համար, SCOP-ի ներկայացուցիչները կտրամադրեն տեղեկատվություն այն մասին, թե ինչպես դիմել՝ օգտագործելով առցանց գրանցումը, որը հասանելի է *www.cdtfa.ca.gov/services* կայքէջում: Գրանցումը հասանելի է նաև մեր գրասենյակներում՝ *www.cdtfa.ca.gov/office-locations.htm*: Դուք պետք է գրանցվեք մեկ շաբաթվա ընթացքում: Մեր գրանցման համակարգը Ձեզ հարցեր կտա Ձեր բիզնեսի վերաբերյալ: Ձեր պատասխանը կբացահայտի ցանկացած հարկային և վճարային ծրագիր(ներ), որոնց համար Դուք պետք է գրանցվեք: Օգնության համար դիմեք մեր Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 1-800-400-7115 (TTY:711) հեռախոսահամարով:

Գրառումների պահում

Շատ կարևոր է, որ Դուք պահեք ճշգրիտ և ամբողջական գրառումներ: Կալիֆորնիայի օրենքը պահանջում է, որ Դուք պահպանեք վաճառքի և գնման գրառումները, անդորրագրերը, վերավաճառքի վկայականները և սովորական հաշվապահական հաշվառման գրքերը: Գրառումները պետք է պահվեն առնվազն չորս տարի: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Կանոնակարգ 1698, *Գրառումներ*:

►

Որո՞նք են իմ իրավունքները:

Դուք հատուկ օրինական իրավունքներ ունեք որպես Կալիֆորնիայի հարկատու: Մեր աշխատակիցները պետք է հարգեն և պաշտպանեն Ձեր իրավունքները ամեն անգամ, երբ մենք շփվում ենք Ձեզ հետ: Որպես Կալիֆորնիայի հարկատու Ձեր իրավունքները ներառում են.

- բարեկիրթ և արագ սպասարկում,
- արդար վերաբերմունք,
- գաղտնիություն, ինչպես նաև
- տեղեկատվություն և օգնություն:

Կարո՞ղ եմ բողոք ներկայացնել, եթե մտահոգություններ ունեմ ստուգման այցի կամ ներկայացուցչի պահվածքի վերաբերյալ:

Այո: Եթե կարծում եք, որ SCOP-ի ներկայացուցիչը գործել է ոչ պրոֆեսիոնալ կամ խախտել է Ձեր իրավունքները, կարող եք բողոք ներկայացնել՝ զանգահարելով կամ գրելով Ձեր տեղական SCOP թիմի գրասենյակ:

Դուք կարող եք գտնել SCOP թիմի գրասենյակների ցանկը մեր կայքում՝ *www.cdtfa.ca.gov/taxes-and-fees/SCOP.htm#Contact*, կապվելով CDTFA-ի Ձեր տեղական գրասենյակի հետ կամ զանգահարելով Հաճախորդների սպասարկման կենտրոն:

Վերահսկիչը կուսումնասիրի Ձեր բողոքը և կկապվի Ձեզ հետ՝ լուծելու Ձեր մտահոգությունները:

Եթե Դուք չեք կարող լուծել Ձեր խնդիրը վերահսկիչի կամ կառավարչի հետ կամ նախընտրում եք Ձեր բողոքը կարգավորել դաշտային գործառնությունների բաժնից դուրս, կարող եք կապվել Հարկ վճարողների իրավունքների պաշտպանի (Taxpayers' Rights Advocate, TRA) գրասենյակի հետ:

Հարկ վճարողների իրավունքների պաշտպան

www.cdtfa.ca.gov/tra
1-888-324-2798

TRA գրասենյակը աջակցում է հարկ վճարողներին, երբ նրանք չեն կարողանում նորմալ ուղիներով լուծել հաշվի խնդիրները, երբ նրանց անհրաժեշտ է տեղեկատվություն որոշակի հանգամանքների հետ կապված ընթացակարգերի վերաբերյալ, կամ երբ կան իրավունքների հնարավոր խախտումներ:

Նամակ ուղարկեք TRA-ին՝
Taxpayers' Rights Advocate, MIC:70
California Department of
Tax and Fee Administration
PO Box 942879
Sacramento, CA 94279-0070

Լրացուցիչ տեղեկությունների համար

Եթե լիցենզիայի ստուգման այցի հետ կապված հարցեր ունեք, կարող եք կապվել Ձեր տեղական SCOP թիմի գրասենյակի հետ:

CDTFA կայքէջ
www.cdtfa.ca.gov

Էլ.փոստ
www.cdtfa.ca.gov/email

Հաճախորդների սպասարկման կենտրոն
1-800-400-7115 (TTY:711)

Հաճախորդների սպասարկման ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ 7:30-ից 17:00 (խաղաղօվկիանոսյան ժամանակով), բացառությամբ նահանգային տոների:

Հարկերից խուսափելու մասին հաղորդում

Հարկերից խուսափելու կասկածանքի մասին հայտնելու համար կապվեք մեր հարկերից խուսափելու թեժ գիծ 1-888-334-3300 հեռախոսահամարով: